



Հարգելի փաստաբաններ.

Ի կատարումն «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի պահանջների՝ առաջիկայում www.azdarar.am կայքում հրապարակվելու է փաստաբանների ցուցակը:

2019 թվականին հրապարակվելիք Փաստաբանների ցուցակում հնարավոր անճշտությունների բացառման նպատակով խնդրում ենք **մինչև 2019թ.փետրվարի 20-ը համապատասխան դիմումով** ներկայացնել տեղեկություններ Ձեր մասնագիտացման, ինչպես նաև Ձեր հետ կապ հաստատելու հնարավոր միջոցների մասին՝ նշելով առնվազն հետևյալ տվյալները.

- անունը և ազգանունը, արտոնագրի համարը, մասնագիտացումը, հեռախոսահամարները և էլեկտրոնային փոստի հասցեն:

Ձեր ցանկությամբ կարող են մատնանշվել նաև տեղեկություններ աշխատանքի վայրի (գործատուի անվանման), աշխատանքի վայրի հասցեի և հեռախոսահամարի վերաբերյալ:

Տեղեկացնում ենք, որ www.azdarar.am կայքում պարտադիր հրապարակվելու է փաստաբանի անունը և ազգանունը, արտոնագրի համարը, մասնագիտացումը, բջջային հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն, ինչպես նաև տեղեկություններ աշխատանքի վայրի հասցեի և հեռախոսահամարի վերաբերյալ: Իսկ եթե փաստաբանը չի ներկայացրել տեղեկություններ աշխատանքի վայրի հասցեի վերաբերյալ, ապա հրապարակվելու է վերջինիս հաշվառման (բնակության) վայրի հասցեն:

Բեռնել դիմումի ձևաթուղթը